ՏԵՂԵԿԱՆՔ

«ԻՆՏԵՐՆԵՏՈՎ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԻ ՄԱՍԻՆ

Հոդված 7. Հրապարակային ծանուցման վճարը

1. Կայքում հրապարակային ծանուցման տեղադրման համար մատուցվող ծառայության համար գանձվում է վճար սույն օրենքով սահմանված դրույքաչափերի սահմաններում՝ գանձապետարանում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության համար բացված արտաբյուջետային հաշվին:

2. Հրապարակող անձը, բացառությամբ սույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված մարմինների կամ սույն օրենքի 3-րդ հոդվածով նախատեսված դեպքերի, ինչպես նաև Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի, պարտավոր է վճարել սույն օրենքով սահմանված վճարը:

3. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ֆինանսական միջոցները ուղղվում են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության նյութատեխնիկական ապահովմանը, մատուցվող ծառայությունների որակի, ինչպես նաև աշխատանքային, սոցիալական և կենցաղային պայմանների բարելավմանը: